



2021 թ. աշնանային վարժություններ

Մաս Ա

1. Գրե՛ք նշված նախադասությունը և թարգմանե՛ք: Մեկնաբանե՛ք բոլոր բայաձևերը:



- ▶ Մի՛ յուսայք յանիրաւութիւն, յափշտակութեան մի՛ ցանկայք. եւ մեծութիւն թէ առուով (var. lect. առուիւ, առիւ) գայցէ, մի՛ յօժարեսցին սիրոք ձեր:
 - **մի՛ յուսայք** և **մի՛ ցանկայք**, արգելական հրամայական
 - **գայցէ**, 3եզ. ստորադասականի I ապառնի
 - **մի՛ յօժարեսցին**, **յօժարիմ** չք-ի Յիոզ. II ապառնի:
- Ճնթ. Կա նաև **յօժարես** նր **հոժարեսցել**, **համոզել**, **հորդորել**, **համաձայնեցնել**, բայց այստեղ դա էական չի:

☐ Սաղմոս կա.11 (2օհրապետան 1805, 3. 63):

2. Նախորդ նախադասությունը վերաձևե՛ք՝ փոխելով եզակին հոգնակիի և հակառակը:

▶ Մի՛ յուսար յանիրաւութիւն, յափշտակութեան մի՛ ցանկար. եւ մեծութիւնը թէ առուովք (առուիւք) գայցեն, մի՛ յօժարեսցի սիրոք քո:

3. Ցույց տվեք **հարցցուք** բայաձևի անցյալ կատարյալի ցոյական հիմքը:

▶ Սա շփոթեցնող հարց է, այստեղ ցոյական հիմք չկա: Սա **հարցանեմ** բայն է՝ ներկայի -ան- ածանցով: Առաջին **ց**-ն արմատական է, իսկ երկրորդը պատկանում է II ապառնիի 1հզ. ձևին:

4. Անկատար անցյալը դարձրե՛ք անցյալ կատարյալ:

4.1. Շարժերի գերկիր եւ խռովեցուցանէիր գաա:

▶ Շարժեցեր գերկիր եւ խռովեցուցեր գաա:

4.2. Շարժեր գևա իբրեւ գեղեզն ի հողմոյ:

▶ Շարժեաց գևա իբրեւ գեղեզն ի հողմոյ:

4.3. Շարժեին զգլուխս իւրեանց:

▶ Շարժեցին զգլուխս իւրեանց:

5. Առաջին ապամնին դարձրե՛ք երկրորդ ապամնի:

- 5.1. Կոչիցե՞ս զմեզ բարբառով:
 - ▶ Կոչեսցե՞ս զմեզ բարբառով:
- 5.2. Եւ ապա կոչիցես զիս և լսիցեմ քեզ:
 - ▶ Եւ ապա կոչեսցես զիս և լուայց քեզ:
- 5.3. Կոչիցեմք զաղջիկն եւ հարցանիցեմք ի բերանոյ Նորա:
 - ▶ Կոչեսցուք զաղջիկն եւ հարցցուք ի բերանոյ Նորա:

6. Վերականգնե՛ք գրաբարյան բնագիրը:

«Ուզում ե՞ս [կամ/իմ], որ (հ)երբայեցիներից կին մի դայակ կանչեմ [II ապամնի], ևս (քեզ համար) կերակրի [սևանիմ բայի պատճառ, I ապամնի] այդ մանկանը»:

- Ապա մեկնաբանե՛ք I և II ապամնիների նրբմաստային տարբերությունները:
 - ▶ Կամի՞ս զի կոչեցից քեզ կին մի դայեակ ի հերբայեցուց անտի, եւ սևուցանիցե քեզ զմանուկը:
 - ☐ Ելից բ.7 (Չօհրապետան 1805, 1. 111):

NB! Նկատե՛ք ապամնիների նրբերանգային տարբերությունը. հմմտ. մեր ավելի վաղ քննած օրինակները, մասնավորապես՝ **ծնանիցի** (անկատար, գործողության ընթացքի մեջ) vs. **ծնցի** (կատարյալ) դասական օրինակը:

7. Վերականգնե՛ք հետևյալ բայերի՝

- ա) հենց այս սահմանական ներկայի 1եզ. ձևերի հնագույն հայկական նախածները.
- բ) դրանց արմատների հնդեվրոպական նախածները (հիմնավորե՛ք ձեր վերակազմությունները):

NB! Հուշում-հիշեցում վերջինի վերաբերյալ. հնդեվրոպական բայարմատի նախածնն է՝ **meld-*:

- 7.1. բառնամ
 - ▶ *բարծ-նամ < հնդեվր. *b^hrǵ^h-
- 7.2. դառնամ
 - ▶ *դարծ-նամ < հնդեվր. *d^hrǵ^h-
- 7.3. զգենում
 - ▶ *(q-)qet^h-նում < հնդեվր. *yes-nu-
- 7.4. մաղթեմ
 - ▶ < մաղթ գոյական (ի հոլ.) < *մա՛ղ(դ)թ(ի) < հնդեվր. *m^ld^h-ti-. ընդ որում՝ *-ti- շեշտակիր ածանցը

պահանջում է, որ արմատը դրվի զրոյական ձայնդարձով: Այդ է պատճառը, որ լիարժեք ձայնդարձի *-e- ձայնավորը չկա՝ ընկել է, արմատը դարձել է զրոյական ձայնդարձով:

Իսկ մաղթեմ բայը երիտասարդ է՝ կազմվել է մաղթ գոյականից՝ փոխարինելով նախնական †մեղդեմ բայը: Ինչպես որ ունենք աղաչեմ բայ > աղաւթ գոյական > աղաւթեմ բայ: Տե՛ս նաև 8-րդ վարժությունը»

◆ Հավելյալ հարցեր

❓ 7.1-7.2-ն է՛լ ինչով են միավորվում. երկու դեպքում էլ սրանցից ի՞նչ գոյականներ են ածանցվել՝ շատ կարևոր լեզվամշակութային իրողություններ, որ արտացոլում են միատեսակ հնչյունական շեղում:

- ▶ Համապատասխանաբար՝
 - բուրզն**՝բուրզ, աշտարակ, աշտարակաձև կոթող՝ և
 - դուրզն**՝բրուտանիվ՝:

Երկու դեպքում էլ անհասկանալի են **ու** ձայնավորը և ***ǵ^h** > **զ** (օրինաչափ **կ** պայթականի փոխարեն) արտացոլումը:

❓ 7.3-ի դեպքում *զ*-ն տեսականորեն կարող է՞ր **ǵ^h*-ից տարբեր աղբյուր ունենալ:

- ▶ Բնիկ հայկական հնչյունաբանությամբ՝ ոչ: Եթե հնդեվրոպական **ǵ^{(w)h}e-* ունենայինք, ապա դա կտար հայ. **ջե-* (մի կողմ թողնենք առանձնահատուկ դեպքերը՝ համաբանություն և այլն):

8. Ինչո՞վ են միավորվում *ի* հոլովման *առու, բայ, բարդ, գիւտ* և *մաղթ* գոյականները. վերակազմե՞ք ու հիմնավորե՞ք:

▶ Դրանք բոլորը հնդեվրոպական **-ti-* ածանցով կազմված բայանուններ են:

8.1. *առու*

▶ հնդեվր. **sru-ti-*

8.2. *բայ*

▶ հնդեվր. **bʰh₂-ti-*

8.3. *բարդ*

▶ հնդեվր. **bʰr-ti-*

8.4. *գիւտ*

▶ հնդեվր. **gid-ti-*

8.5. *մաղթ*

▶ հնդեվր. **m/dʰ-ti-* (տե՛ս վերը՝ 7.4):

NB! Ձեր զգոնությունն ստուգելու համար գրել էի «*ի* խոնարհում»: Լուիզան նկատեց այդ փոքրիկ ծուղակը: Հասկանալի է, որ պիտի լինի «*ի* հոլովում»

9. ՇԱՐԱԴ(Ա)՝ զավեշտական բառախաղ

• ա) Հնդեվրոպական մի լեզվում՝ հինգտասանոց բառ, որի բնիկ հայկական ցեղակիցը երեքտասանոց է և սկսվում է *h*-ով.

• բ) Այդ լեզուն կրող մի հռչակավոր արվեստագետ (18-րդ դար)

Ա + Բ = 19-րդ դարի հռչակավոր գիտնական՝ վերոհիշյալի համերկրացին:

Անվանե՞ք վերջինիս:

▶ Ֆոյերբախ

Գերմ. *Feuer*՝կրակ՝ (հայերեն *հուր* բառի ցեղակիցը) + *Bach* = *Feuerbach*

Հնդեվր. **ուղղական հոլ.** **péh₂ur*, **սեռական հոլ.** **ph₂u(e)n-s n.* 'կրակ', չեզոք սեռի տարահիմք (հետերոկլիտիկ) **-r/n-* հարացույց:

	Nominative / Ուղղական հոլով	Oblique / Թեք հոլովահիմք
PIE	<i>*péh₂u-r</i>	gen. <i>*ph₂u(e)-n-s</i>
Hittite	<i>paḫḫur</i>	gen. <i>paḫḫuenaš</i>
Armenian	<i>hur, hroy, hur-b</i>	obl. <i>*hun-</i>
Greek	<i>πῦρ, πῦρός</i>	
Germanic	OHG <i>fuir</i> , OIc. <i>fúrr, fýrr</i>	Goth. nom. <i>fon</i> < <i>*pḡōn</i> OIc. nom. <i>funi</i>
Baltic		OPr. nom. <i>panno</i>

10. Հայերեն *առաւել* բառի բարբառային իմաստներից մեկն է՝ 'արտի ծայրի անվար (չվարած) մնացած մասը': Ժողովրդական արվեստի ո՞ր իրողության անվանումն է կազմված մի ձայնարկությունից ու վերոհիշյալ բառից: Բացատրե՞ք այդտեղ արտացոլված ձայնավորային հնչյունափոխությունը:

▶ *hnʳ + առաւել = հռռովել* ևն.

☐ • Աճառեան 1913. 131-132:

• ՀԱԲ 1. 358a:

• Կոմիտաս Վարդապետ, Լօռու գութաներգը Վարդաբլուր գիւղի ոճով. *Նաւասարդ. գրական և գեղարուեստական տարեգիրք*. Ա (կազմեցին Դանիէլ Վարուժան և Յ. Ճ. Սիրունի), Կ. Պոլիս, 1914. 311-336 (+ Կոմիտասի դիմանակարն ու 3 էջ նոտաներ):

• Մարգարյան 2015. 172-174:

Տարբերակներից հիմնականը՝ ABBC > AAC (միաժամանակ՝ առնմանություն և տարնմանություն)

Ավելի մանրամասն՝ powerpoint:

11. Մենք գիտենք, որ արդի հայերենի գոյականներն ուղղագրական ու ձևաբանական (հոլովման կարգ) առումներով հաճախ են տարբերվում իրենց գրաբարյան հին ձևերից: Օրինակ՝ արդի արևելահայերենում *ազգ, բան, գործ, եղեգ, ծով* և *քաղաք* բառերը բոլորն էլ պատկանում են **h** հոլովման (սեռականը կազմում են **-h** վերջավորությամբ՝ *ազգի, բանի, բոցի* և այլն), այնինչ գրաբարում դրանք բոլորն ունեցել են իրարից տարբեր հոլովումներ (*ազգ-ա-ւ, բան-ի-ւ, գործ-ո-ւ* և այլն): Դրանք գուշակել հնարավոր չի, պարզապես պիտի սովորենք:

❓ ՀԱՐՑ. Ո՞րն է գրաբարյան այն շատ կոնկրետ ու կուռ տեքստային խումբ-համակարգը, որտեղ ներկայացված են ստորև թվարկված արևելահայկական գոյականների գրաբարյան հին հոլովաձևերը, որոնք վճռորոշ են դրանց գրաբարյան հոլովումներն իմանալու և մտապահելու համար: Ընդ որում՝ ընդգծում եմ, այդ տեքստային վկայությունները լրիվ բավարար են այդ գոյականների հոլովակարգերը հստակ իմանալու համար.

ազգ, ապարանք, արեգակ, ավերակ, բան, բարձ, բյուր, բլուր, բոց, գետ, դուստր, եղեգ, եղջերու, գարմ, ծով, հազար, ստրուկ, վիշապ, քաղաք, քաջ, քել:

Ներկայացրե՛ք ու բացատրե՛ք այնտեղ վկայված հոլովաձևերը:

▶ Խոսքը վիպասանական հատվածների մասին է, որ պիտի անգիր իմանաք: Կրկնե՛ք ու ամրապնդե՛ք:

12. Հնդեվրոպական լեզուներից մեկն ունի **brun-** հիմքով ու ջրային իմաստով մի բառ, որ սերում է հնդեվրոպական չեզոք սեռի մի գոյականից: Անվանե՛ք վերջինիս հայկական ժառանգը՝ որ տեսքով շա՛տ է տարբերվում վերոհիշյալ ցեղակցից, բայց հստակ բացատրվում է ձայնդարձով ու «գարմանալի» բառավերջով և արտացոլում է հայերենի համար լրիվ կանոնավոր հնչյունափոխություններ:

▶ Հնդեվր. ուրդական հոլ. **b^hreh₁u-ʔ*,

թեք հոլովահիմք **b^hrh₁u-n(t)-*

• հուն. *φρέαρ*, սեռ. *φρέατος n*;

• հայ. *աղբեր / աղբիւր*;

• գերմ. **brunna(n)- m.* > գոթ. *brunna*, հին իսլ. *brunnr*, հին անգլ. *brunna*, հին վերին գերմ. *brunno*, հոլանդ. *bron*

Յմմտ. վերը՝ 9-րդ վարժությունը (*հուր* և **հոււ-*):

• **13.** Հետևյալ 11 բայաձևերը պատկանում են հնդեվրոպական միևնույն բայի հարացույցին: Առանձին-առանձին վերականգնե՛ք դրանց հնդեվրոպական նախաձևերն ու դրանց հայկական ուղղագիծ ժառանգ ձևերը և սիրուն դասավորեք բոլոր ձևերն ըստ հարացույցի՝ հերթով-կարգով, նախ երեք եզակի ձևերը, ապա երեք հոգնակիները: Բացատրե՛ք հայերենի հնչյունական արտացոլումները:

- սանսկրիտ *भरसि bhárasī*
- սանսկրիտ *भरामसि bhárāmas(i)*
- սանսկրիտ *भरामि bhárāmi*
- սանսկրիտ *भरति bhárati*
- սանսկրիտ *भरन्ति bháranti*
- ավեստ. *barahi*
- գոթերեն *bairis*
- հին եկեղեց. սլավ. *berǫ*
- հին եկեղեց. սլավ. *berete*
- հին եկեղեց. սլավ. *berǫtъ*
- հունարեն *φέρετε*



	Հնդեվրոպ.	հայերեն	սանսկրիտ	հունարեն	հին եկ. սլավ.	այլ
1sg.	<i>*bʰér-o-h₂</i>			<i>φέρω</i>		
	>> <i>*bʰér-o-mi</i>	<i>բերեմ</i>	<i>bhárāmi</i>		<i>berǫ</i>	
2sg.			<i>bhárasi</i>			ավ. <i>barahi</i> գոթ. <i>bairis</i>
3sg.			<i>bhárati</i>			
1pl.			<i>bhárāmas(i)</i>			
2pl.				<i>φέρετε</i>	<i>berete</i>	
3pl.			<i>bháranti</i>		<i>berǫtʰ</i>	

Մաս F

● **14.** I ապառնին դարձրե՛ք II ապառնի:

- 14.1. *շարժիցեմ*
 - ▶ *շարժեցից*
- 14.2. *շարժիցիմ*
 - ▶ *շարժեցայց*
- 14.3. *շարժիցես*
 - ▶ *շարժեսցես*
- 14.4. *շարժիցիս*
 - ▶ *շարժեսցիս*
- 14.5. *անլիցեմ*
 - ▶ *արարից*
- 14.6. *անլիցես*
 - ▶ *արասցես*
- 14.7. *լսիցեմ*
 - ▶ *լուայց*
- 14.8. *լսիցես*
 - ▶ *լուիցես*

● **15.** «Կոռնելիոսը սպասում էր [*մնամ*] նրանց»:

- ▶ Կոռնելիոս մնայր նոցա:

● **16.** «Եվ նա խոսում էր [*խօսիմ*] իր սրտում, և իր շուրթերը [*շուրթն*] չէին շարժվում»:

- ▶ Եւ նա խօսէր ի սրտի իւրում, եւ շրթունք իւր ոչ շարժէին:

● **17.** «Որք մնացինք մենք, և մեր հայրը չկար [*գով*]»:

- ▶ Որք մնացաք մեք, եւ ոչ գոյր մեր հայր:

● **18.** «Եվ անցանք [*անցանես*] Եսափի որդիներով»:

- ▶ Եւ անցաք որդւովքն Եսաւայ:

● **19.** «Տեսան ինձ և շարժեցին գլուխներն իրենց»:

- ▶ Տեսին զիս եւ շարժեցին գգլուխս իւրեանց:

● **20.** «Լեռները շարժվեցին նրանից»:

- ▶ Լերինք շարժեցան ի նմանէ:

● **21.** «Չկարողացավ շարժել նրան»:

- ▶ ոչ կարաց շարժել զնա:

- **22.** «Առավ կողը Ադամի» (վերջավորությունների «գույնի» առումով՝ բացառություն):
 - ▶ Էռռ գկողն Ադամայ:
- **23.** «Հղիացավ (յղանավ) նա մորից»:
 - ▶ յղացաւ նա ի մօրէն:
- **24.** Թարգմանե՛ք նախ I ապառնիով, ապա՝ II ապառնիով:
 - 24.1. «Առնեն դու կին որդուն իմ՝ Իսահակին»:
 - ▶ Առնուցուս դու անտի կին որդւոյ իմում Իսահակայ:
 - Առցես դու անտի կին որդւոյ իմում Իսահակայ:
 - 24.2. «Մի ծառ կշարժվի անտառում [անտառ, ի-ա հոլ.] հողմից [հողմ, ո հոլ.]»:
 - ▶ Ծառ մի շարժիցի յանտառի ի հողմոյ:
 - Ծառ մի շարժեցի յանտառի ի հողմոյ:
 - 24.3. «Եվ կշարժեմ քո (այս) աշտանակն իր տեղից, եթե չապաշխարես [ապաշխարեմ, -եցի չք, նք]»:
 - ▶ Եւ շարժիցեմ գաշտանակս քո ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարիցես:
 - Եւ շարժեցից գաշտանակս քո ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես:
 - 24.4. «Եվ կշարժվեն լեռները»:
 - ▶ Եւ շարժիցին լերինք:
 - Եւ շարժեցին լերինք:
 - 24.5. «Ամբարիշտների տները կկործանվեն» [NB! Առաջին բառի ք-ն հնում ի՞նչ է եղել] :
 - ▶ Տունք ամպարշտաց՝ կործանիցին:
 - Տունք ամպարշտաց՝ կործանեսցին:
- **25.** Գտե՛ք X-ն ու մյուսները:
 - 25.1. Հնդեվրոպական X > խեթերեն *ešmi*, սանսկրիտ *ásmi*, ավեստերեն Y, հայերեն Z:
 - 25.2. Հնդեվրոպական X > խեթերեն *ašanzi*, սանսկրիտ *sánti*, հունարեն *εἰσί(ν)*, գորերեն *sind*, հայերեն Y:
 - ▶ 27.1. **h₁és-mi*
 - 27.2. **h₁s-énti*
- **26.** Դիտարկենք հուն. *θεῖνω* բայը.
 - 26.1. Տառադարձե՛ք:
 - 26.2. Տեսականորեն քանի՞ հնարավոր հնդեվրոպական հնչույթ կարող է թաքնված լինել հուն. օ-ի տակ:
 - 26.3. Ի՞նչ դասական օրինակ կարող եք մատնանշել այդ տարբերակների:
 - 26.4. Վերականգնե՛ք կոնկրետ այս հունական բայի հնդեվրոպական նախաձևը:
 - 26.5. Մատնանշե՛ք հայկական ստույգ ցեղակիցը:
 - ▶ 29.1. theínō
 - 29.2. **dʰ* կամ **gʷʰ*
 - 29.3. **gʷʰer-mo-* > հուն. *θερμός*, հայ. *ջերմ*, ո հոլ.
 - 29.4. **gʷʰen-je-*
 - 29.5. **ջինջեմ* > *ջնջեմ*
- **27.** Հնդեվրոպական X > սանս. *catvāras* [चत्वारस], հուն. դոր. *τέτορες*, լատ. *quattuor*, գորթ. *fidwor*, հայ. Y:
 - 27.1. Գտե՛ք X-ն ու Y-ը:
 - 27.2. Հայերեն ձևի ամենամերձավոր ցեղակիցը ո՞րն է:
 - ▶ 27.1. Հնդեվր. **kʷetwores* 'չորս' > հայ. *չորք*
 - 27.2. Ամենամոտը հուն. դոր. *τέτορες* ձևն է՝ **-μ-ի* անկումով:
- **28.** Սանսկրիտի հետևյալ ձևերը հոգնակի գործիական են՝ *चतुर्भिस् catúrbbhis* և *पितृभिस् pitṛbbhis*: Վերականգնե՛ք դրանց հնդեվրոպական նախաձևերը: Ի՞նչ կառուցվածքային ընդհանրություն ունեն դրանք:
 - ▶ Հնդեվր. հոգն. գործ. **kʷetur-bʰis* > սանս. *catúrbbhis*
 - Հնդեվր. **ph₂tr-bʰis* > սանս. *pitṛ-bhis*
 - Երկու դեպքում էլ գործիական հոլովը կազմվել է գրոյական ձայնդարձով.

- *k^wet^her- > զրո ձայնդարձ *k^wetur-b^his
- *ph^hter- > զրո ձայնդարձ *ph^htr-b^his

• 29. Գրե՛ք նախորդ վարժության սանսկրիտ ձևերի հայկական քերականական համապատասխանները (դրանցից առաջինը **h** հոլովում ունի): Այդ հայկական ձևերից ո՞րն է հնդեվրոպականի ուղղագիծ արտացոլումը: Իսկ մյուսի դեպքում ի՞նչն է, որ երկրորդային է. ու ո՞րն է դրա պատճառը:

▶ Ջնդեվր. *ph^htr-b^his > սանս. पितृभिस् **pitṛ-bhis** և ուղղագծորեն հայ. **հար-բ(-ք)**

Իսկ **չորք**-ի հոգն. գործիականն է **չոր-հ-Լ-ք**, որը արդյունք է 'երեք' թվականի համաբանական ազդեցության.

Ջնդեվր. *tri-b^his > սանս. **tribhís** և հայ. **եղի-Լ-ք**

Նկատե՛նք, որ վերջինում գործ ունենք *trejes (> հայ. **ե-րե-ք**) թվականի զրոյական ձայնդարձի հետ՝ *trei- (լրիվ ձայնդարձ) vs. *tri- (զրոյական ձայնդարձ), որտեղ ***i**- ձայնավորը մաքուր արմատական է:

• 30. Սանսկրիտ श्वभिस् *śvabhís*

30.1. Մեկնաբանե՛ք այս ձևը և տվե՛ք դրա հայկական հստակ քերականական համապատասխանը (շնչավոր աշխարհի իմաստախմբից է):

30.2. Նկատի ունենալով մի կողմից հուն. *κύων* ցեղակիցը, մյուս կողմից՝ 32-րդ վարժության նյութը, համեմատե՛ք այս բառերի քննվող և ուղղական հոլովաձևերը:

30.3. Այս հայկական բառում տեղ գտած ուշագրավ հնչյունափոխությունը արտացոլվել է նաև նույն իմաստախմբի մի այլ արմատում՝ բնիկ հայկական և փոխառյալ ճանապարհներով:

30.4. Ի՞նչ կասեք սանսկրիտ *Śyāvāśva-* անձնանվան մասին:

30.5. Այդ հնդիրանական անձնանունը մեր ո՞ր վիպասանական հատվածն է հիշեցնում:



30.1. Սա սերում է հնդեվրոպական *k^wyn-b^his հոգնակի գործիական հոլովաձևից, որ հայերենում արտացոլված է **չուն** բառի ***չան-ք-ք** > **չամքք** հոլովաձևում:

30.2. Ջնդեվրոպական ուղղ. հոլ. *k^wōn, գործ. *k^wyn-b^his (զրո ձայնդարձ). հմմտ. նախորդ վարժությունը:

30.3. *h₁ek^wyo-`ձի' > հայ. էշ`էշ' (բնիկ) vs. ասպ-`ձի' (իրան. փոխառ.)

30.4. Սանսկրիտ *Śyāvāśva-* անձնանվան իրանական ցեղակիցից՝ իրան. **Syāvāsp(a)-* > հայ. *Շալասպ*

30.5. *Չեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ*

28-30 վարժությունների ամփոփիչ աղյուսակ

Ուղղական հոլով (լրիվ ձայնդարձ)			Հոգնակի գործիական (զրո ձայնդարձ)		
հնդեվրոպ.	սանսկրիտ	հայերեն	հնդեվրոպ.	սանսկրիտ	հայերեն
*ph ^h tēr	pitṛ[ṛ]	հայր	*ph ^h tr-b ^h is	pitṛ-bhis	հար-ք-ք
*k ^w ōn	śvā[ṇ]	չուն	*k ^w yn-b ^h is	śvabhís	չամ-ք-ք
*k ^w et(y)ores	catvāras	չորք	*k ^w etur-b ^h is	catúr-bhis	չոր-հ-Լ-ք
*trejes	tráyas	ե-րե-ք	*trī-b ^h is	trī-bhis	եր[ի]-Լ-ք

Մաս 4

- 31. Գրե՛ք հայերեն գրված առաջին նախադասությունը (Առակք ա.2):
 - ▶ ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ:
 - ☐ Առակք ա.2 (Չօհրապեան 1805, 3. 141):
- 32. «ճանաչում է նրանց [**morgom*]-երը»:
 - ▶ ճանաչե՛ գգործս Լոցա:
 - ☐ Յովբ լր.25 (Cox 2006. 222):
- 33. «Քանզի ճանաչում է Տերը արդարների [*n* հոլ.] ճանապարհները»:
 - ▶ Քանզի ճանաչե՛ Տեր զճանապարհս արդարոց:
 - ☐ Սաղմոս ա.6 (Չօհրապեան 1805, 3. 13):
- 34. «Անմեղի խրատը ճանաչվում է [**megʰr(i)-V-bʰor-eh₂-*]-ներիս [-ների կողմից]»:
 - ▶ խրատ անմեղին՝ ճանաչի մերձատրաց:
 - ☐ Առակք ժե.10 (Չօհրապեան 1805, 3. 165):
- 35. «Արդարների շուրթերը ճանաչում են [**bʰrǵʰ-u-(r/n)-*]-ները, և անզգամները կարոտության մեջ կսատկացվեն [*սատակեմ*Նբ, II ապամնի]»:
 - ▶ Շրթունք արդարոց ճանաչեն զբարձուևս. և անզգամք ի կարօտութեան սատակեցին:
 - ☐ Առակք ժ.21 (Չօհրապեան 1805, 3. 157):
- 36. «և չէին ճանաչում Տիրոջը»:
 - ▶ եւ ոչ ճանաչէին զՏեր:
 - ☐ Ա Թագաւորութեանց բ.12 (Չօհրապեան 1805, 2. 8):
- 37. «Եվ կպաշտենք [II ապամնի] օտար աստվածներին, որոնց դու չես ճանաչի [I ապամնի]»:
 - ▶ Պաշտեսցուք զաստուածս օտարս զորս ոչ ճանաչիցես դու:
 - ☐ Երկրորդ օրէնք ժգ.6 (Cox 1981. 133):
- 38. «Եթե չճանաչես [I ապամնի] նրան, կժողովես [II ապամնի] նրանց (դեպի) [**tjo-* տուն]»:
 - ▶ Եթե <...> ո՛չ ճանաչիցես զևս ժողովեսցես զևսոս ի տուն քո:
 - ☐ Երկրորդ օրէնք իբ.2 (Cox 1981. 162):
- 39. «և չի ճանաչվի [I ապամնի], թե որպես էր»:
 - ▶ և ոչ ճանաչիցի թե որպես էր:
 - ☐ Յովբ գ.17 (Cox 2006. 80):
- 40. «Մի՞թե խավարում կճանաչվեն [I ապամնի] [**tjo-* սքանչելիքները]»:
 - ▶ Մի թե ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո:
 - ☐ Սաղմոս ձԷ.13 (Չօհրապեան 1805, 3. 87):
- 41. «Աստված, դու ճանաչեցիր [**h₁me*] անզգամությունը, [**h₁epi*] իմ հանցանքները X-ից [**tjo-*] չթաքնվեցին [*ծածկեմ*Նբ]»:
 - ▶ Աստուած, դու ծանեար զանզգամութիւն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան:
 - ☐ Սաղմոս կը.6 (Չօհրապեան 1805, 3. 68):
- 42. «Տեր, X-եցիր [**(s)pʰ(ʰ)orǵʰ-*] ինձ և ճանաչեցիր ինձ, դու ճանաչեցիր իմ Y-ելը [*< *ni- + *si-sd-, ի խոնարհման բայ]*] և իմ ելնելը [**h₃r-i-*]»:
 - ▶ Տեր, X-եցիր ինձ և ճանաչեցիր ինձ, դու ճանաչեցիր իմ Y-ելը [*< *ni- + *si-sd-, ի խոնարհման բայ]*] և իմ ելնելը [**h₃r-i-*]»:
 - ☐ Սաղմոս կը.6 (Չօհրապեան 1805, 3. 68):

- ▶ Տեր, փորձեցեր զիս և ծանեար զիս, դու ծանեար զևստել իմ և գյառնել իմ:
☐ Սաղմոս ճլը.1-2 (Չօհրապետան 1805, 3. 129):

- 43. «[ևա] ճանաչեց X-ը [**h₂reui-* + ***h₃k^w-kon-*] երկնքում»:
 ▶ Չարեզակն ծանեալ յերկինս:
☐ Գ Թագաւորութեանց ը.53 (Չօհրապետան 1805, 2. 152):

- 44. «X-եցիր [**h₂(e)r-*, հմմտ. հուն. *ἀραρίσκω*, աոր. *ἤραρον*] Y-ը [ցեղակից՝ սանս. *रोचन rocaná-*] ժամանակի համար, [**h₂reui-* + ***h₃k^w-kon-*] ճանաչեց/իմացավ իր մտնելու ժամը»:
 ▶ Արարեր զլուսին վասն ժամանակի, արեզակն ծանեալ զժամ մտանելոյ իւրոյ:
☐ Սաղմոս ճգ.19 (Չօհրապետան 1805, 3. 101):

- 45. «ճանաչեց Հովսեփն իր X-ներին [ցեղակից հոլովածն՝ գործ. *bropruns*], և նրանք չճանաչեցին նրան»:
 ▶ Ծանեալ Յովսեփ զեղբարսն [**b^hreh₂tr-ns* > *եղբարս*] իւր, եւ նոքա ոչ ծանեան զևա:
☐ Ծննդոց խբ.8 (Չեյթունյան 1985. 348):

- 46. «Որպես X-եցինք [**k₁u-*] և իմացանք այս, և մեր [**ph₂tr-es*] պատմեցին մեզ»:
 ▶ Որպես լուսք և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ:
☐ Սաղմոս հէ.3 (Չօհրապետան 1805, 3. 77):

- 47. «լսեցիք [էն երկարոտ ձևը դրեք] և ճանաչեցիք Աստծո շնորհները X-ությամբ [< իրան. **čāšma-ōi-t(a)-*՝աչքով տեսնված՝]»:
 ▶ լուարուք և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ:
☐ Առ Կողոսացիս ա.6 (Չօհրապետան 1805, 4. 484):

- 48. «Ըն ծառան եմ, իմաստուն արա ինձ, և կճանաչեմ [II ապամնի] քո վկայությունները»:
 ▶ Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:
☐ Սաղմոս ճժը.125 (Չօհրապետան 1805, 3. 119):

- 49. «Եվ կճանաչես [II ապամնի] քո X-ում [**k₁er(d)*, սեռ. **k₁rd-ós* n.]»:
 ▶ Եւ ծանիցես ի սրտի քում:
☐ Երկրորդ օրէնք ը.5 (Cox 1981. 112):

- 50. «և չի ճանաչի [II ապամնի] նրան իր տեղը»:
 ▶ և ոչ ծանիցէ զևա տեղի իւր:
☐ Յովք ի.9 (Cox 2006. 147):

- 51. «Կճանաչվի Տերը եգիպտացիներից, և կճանաչեն եգիպտացիք տիրոջը [երկուսն էլ՝ II ապամնի] այն X-ը [**H(e)h₂m-ōr*]»:
 ▶ Եւ ծանիցի Տեր [յ-]եգիպտացւոցն, և ծանիցեն եգիպտացիքն զՏեր յաւուրն յայնմիկ:
☐ Եսայի ժթ.21 (Չօհրապետան 1805, 3. 355):

- 52. «Այլ/Ուրեմն մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ հոգին, որ Աստուծոց է. որպէզի ճանաչենք [II ապամնի] այն, որ Աստուծոց շնորհվեց մեզ»:
 ▶ Այլ մեք ո՛չ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զհոգին որ յԱստուծոյ. զի ծանիցուք զայն որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ:
☐ Ա Կորնթացիք բ.12 (Չօհրապետան 1805, 4. 405):

- 53. «որ ճանաչեք [II ապամնի], թե ե՛ս եմ ձեր տեր Աստված»:
 ▶ զի ծանիջիք թե ե՛ս եմ տեր Աստուած ձեր:

☐ Երկրորդ օրէնք իթ.6 (Cox 1981. 191):

- 54. «Ճանաչի՛ր»՝ զհարդ «անցար» ընդ անապատն մեծ:

▶ Ծանի՛ր զհարդ անցեր ընդ անապատն մեծ :

☐ Երկրորդ օրէնք ք.7 (Cox 1981. 80):

- 55. «X-ի՛ր [**(s)p^(h)org^h-*] ինձ, Աստուած, և ճանաչի՛ր իմ Y-ը [ցեղակիցներ՝ լիտվ. *širdis*, հուն. *κῆρ*]. քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շավիղները»:

▶ Փորձեա՛ զիս Աստուած և ծանի՛ր զսիրտ իմ, քննեա՛ զիս և ծանի՛ր զշավիղս իմ:

☐ Սաղմոս ճլր.23 (Չօհրապեան 1805, 3. 130):

- 56. «Ճանաչե՛ք, զի նա է Տեր Աստված մեր»:

▶ Ծաներո՛ւք զի նա է Տեր Աստուած մեր:

☐ Սաղմոս դթ.3 (Չօհրապեան 1805, 3. 97):

- 57. «Ընթացե՛ք [ընթանամ չք, քառավանկ ձև] այս կողմ և այն կողմ [կողմ բառը փոխարինեք հոմանիշով] Երուսաղեմի ճանապարհներով [ընդ + հայց.], և տեսե՛ք ու ճանաչե՛ք [եռավանկ] և փնտրե՛ք [դրե՛ք /ս... նք-ով] նրա X-ներում [< իրան. **fra-paδa-k(a)*]. Եթե Y-եք [հնդեվր. **mid-*] մի [հնդեվր. **h₂nē*], որ արդար գործ անի [բառացի՝ «իրավունք անի»] և փնտրի «հավատք», ես կլինեմ նրանց քավիչ՝ ասում է Տերը [բոլոր ստորադասականները՝ I ապառնի, բացի վերջինից]»:

▶ Ընթացարո՛ւք յայսկոյս և յայնկոյս ընդ ճանապարհս Երուսաղեմի, և տեսե՛ք և ծաներո՛ւք, և խնդրեցե՛ք ի հրապարակս նորա, եթե գտանիցեք այր մի որ առնիցե զիրաւունս, և խնդրիցե հաւատս. և եղեց նոցա քավիչ՝ ասե Տեր:

☐ Երեմիա ե.1 (Չօհրապեան 1805, 3. 531):

Հրաչ Մարտիրոսյան

10.03.2021 Բեռլին / Լեյդեն